ԹԱՄԱՐԱ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

10

ԴԱՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԵՎԱՆ

2021

Թեմատիկ պլան

Հայոց լեզու

Դասարան՝ 10

Տարեկան՝ 68 ժամ

Հ.	ժամ	Թեմա	Վերջնարդյունք
		ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ	
1.	**6**	**Հայոց լեզվի պատմություն**	
	5/1	Հայոց լեզվի ծագումը և տեղն աշխարհի լեզուների մեջ: Լեզուների ցեղակցությունը	*Իմանա* հայերենին ցեղակից լեզուները և տարբերի մյուս լեզվախմբերից: *Հիմնավորի* հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում:
	5/2	Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը	*Գնահատի* հայոց գրերի դերն ու նշանակությունը հայահպանության գործում:

			Գնահատի սերունդների թողած գրական ժառանգությունը՝ որպես ազգային մշակութային արժեք:
	5/3	Հայերենի զարգացման փուլերը. գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար (արևելահայերեն և արևմտահայերեն)	*Իմանա և համեմատի* հայոց լեզվի զարգաց-ման երեք փուլերը (հին հայերեն, միջին հայերեն, նոր հայերեն (աշխարհաբար)՝ նշելով որոշ առանձնահատկություններ, *գտնի* օրինաչափությունները: *Կարողանա կարդալ* գրաբարյան տեքստերը՝ ընդունված կանոնների համաձայն: *Կատարի* գրաբարյան հայտնի տեքստերից փոխադրումներ:
	5/4	Գրաբարի լեզվական համակարգը: Գրաբարի և արևելահայերենի հիմնական տարբերությունները (հնչյունական, ուղղագրական, բառիմաստային, քերականական) Հնչյունական կազմը: Գրությունը և արտասանությունը	*Համեմատի* և *գտնի* գրաբարի և արևելահայերենի հիմնական տարբերութ-յունները: *Նշի* առկա տարբերությունները:
	5/5	Միջին հայերենի ընդհանուր նկարագիրը	*Իմանա* միջին հայերենի բառապաշարի քերականական առանձնահատկությունն- ի մասին: *Կատարի* միջինհայերենյան հայտնի տեքստերից փոխադրումներ:

	5/6	Միջին հայերենի հնչյունական համակարգը, հնչյունական նոր երևույթները, հնչյունափոխություն և ուղղագրական տարբերությունները գրաբարից (ուսուցանող գրավոր)	*Տարբերի* միջին հայերենը գրաբարից: Ընդհանրություններ *գոնի* նոր հայերենի, գրաբարի և միջին հայերենի հնչյունական համամակարգերի միջև: *Արժևորի* միջին հայերենով ստեղծված գրական ժառանգության դերը անձի գեղագիտական դաստիարակության գործում:
2.	**14**	**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱ-ԽՈՍՈՒԹՅՈՒՆ**	
	14/1	Ձայնավորների արտասանությունը և ուղղագրությունը ***(Է- Ե (յե))***	*Իմանա* հայերենի տառերի հաջորդական դասավորվածությունը (գրական հայերեն և գրաբար) և *համեմատի* այլ լեզուների ձայնավորների համակարգի հետ, *գտնի* օրինաչափությունները և տարբերություն-ները: *Տիրապետի* ***Է- Ե (յե)*** ձայնավորների արտասանության և ուղղագրության առանձնահատկություններին և ճիշտ *կիրառի* խոսքում: *Կարողանա* նմանություններ ու տարբերություններ գտնել այլ լեզուների ձայնավորների արտասանության ու գրության հետ:
	14/2	***Օ-Ո, Ը*** ձայնավորների արտասանությունը	*Իմանա* ***Օ-Ո, Է- Ե (յե)*** ձայնավորների

		և ուղղագրությունը	արտասանության և ուղղագրության առանձնահատկությունները և *կիրառի* գրավոր խոսքում: *Իմանա* տառի և հնչյունի տարբերությունը, գրության առանձնահատկությունները և կարողանա ճիշտ *կիրառի* գրավոր խոսքում:
	14/3	Երկհնչյունների և *յ* ձայնակապի ուղղագրությունը ***(ՅՈ, ՅԱ, ՅՈՒ, ՈՒՅ)***	*Տիրապետի* երկհնչյունների ուղղագրության կանոններին/սկզբունքներին: *Գտնի* երկհնչյուններ ունեցող բառեր և դրանցով կազմի կապակցված խոսք:
	14/4	Հայերենի բաղաձայն հնչյունները և նրանց տեսակները Բաղաձայնների արտասանությունը և ուղղագրությունը ***(Բ-Պ-Փ, Գ-Կ-Ք)***	*Ճանաչի և տարբերակի* եռաստիճան բաղաձայնները և ճիշտ ուղղագրությամբ *կիրառի* գրավոր խոսքում: *Համեմատի* այլ լեզուների բաղաձայնական համակարգի հետ, գտնի օրինաչափություն ները և տարբերությունները:

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Հայոց լեզվի ծագումը և դիրքը աշխարհի լեզուների մեջ:

1. Հնդեվրոպական լեզվաընտանիքի ճյուղեր և նրանց մեջ մտնող լեզունե՛ր թվարկիր:

---

2. Տեքստից օգտվելով՝ կազմի՛ր *հնդեվրոպական լեզուների* տոհմածառը քո պատկերացմամբ: http://www.varjaran.am/book/10-id%20dasaran/humanitar/hayoc%2010_0.pdf էջ 5-6:

3. **Գտի՛ր և երկայուն աղյուսակում համապատասխանաբար տեղադրի՛ր հայերենին ցեղակից և ոչ ցեղակից լեզուները:**

Հունարեն, վրացերեն, հունգարերեն, գերմաներեն, ֆիններեն, իտալերեն, էստոներեն թուրերեն, հունգարերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, ճապոներեն, իսպաներեն, աղրբեջաներեն, բելառուսերեն, տաջիկերեն, հնդկերեն, ասորերեն, պարսկերեն, ուզբեկերեն, աբխազերեն, շվեդերեն, դանիերեն, քրդերեն, ալբաներեն, արաբերեն, ուկրաիներեն, լեհերեն, եբրայերեն, ֆիններեն, պորտուգալերեն, տիբեթերեն, նորվեգերեն:

Հայերենին ցեղակից լեզուներ	Հայերենին ոչ ցեղակից լեզուներ

4. Կազմի՛ր տրված տեքստի սեղմագիրը:

Աշխարհում երեք հազարից ավելի կենդանի և մեռած լեզուներ կան:

Գիտնականները պարզել են, որ լեզուներ կան, որոնք առաջացել են միևնույն հիմք լեզվից կամ նախալեզվից: Այդ դեպքում ասում են, որ լեզուները ցեղակցական կապեր ունեն: Ցեղակից լեզուները խմբավորվում են լեզվաընտանիքների մեջ: Այսպես, օրինակ, հունարենը,գերմաներենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը, իսպաներենը, իտալերենը, հինդին, պարսկերենը և բազմաթիվ այլ լեզուներ մտնում են հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ: 19-րդ դարում լեզվաընտանիքն այդպես կոչվեց, քանի որ այս լեզուներով խոսողները զբաղեցնում էին Հնդկաստանից մինչև հեռավոր Իսլանդիա ընկած տարածքները:

Հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին:

Հնդեվրոպական լեզվաընտանիքից բացի կան նաև ուրիշ լեզվաընտանիքներ: Այսպես, օրինակ, հուն-գարերենը, ֆիններենը, էստոներենը և այլ լեզուներ կազմում են ֆիննաուգրական լեզվաընտանիքը, թուրքերենը, ադրբեջաներենը, ղազախերենը, ուզբեկերենը մտնում են թուրքական լեզվաընտանիքի, արաբերենը, ասորերենը, եբրայերենը՝ սեմական, վրացերենը, աբխազերենը՝ իբերակովկասյան, չինարենը՝ չին տիբեթական լեզվաընտանիքների մեջ:

Լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուները ցեղակցական տարբեր մերձավորություն ունեն: Ըստ մերձավորության աստիճանի լեզուները խմբավորվում են ճյուղերի կամ խմբերի մեջ: Օրինակ՝ ռուսերենը, ուկրաիներենը, բելառուսերենը, լեհերենը, բուլղարերենը, չեխերենը, սլովակերենը, սերբերենը մտնում են հնդեվրոպական լեզվաընտանիքի սլավոնական խմբի մեջ: Այս լեզուները մերձավոր ցեղակիցներ են, և դրանցով խոսողները բավական լավ հասկանում են իրար: Այդպես էլ գերմաներենը, անգլերենը, շվեդերենը, դանիերենը մտնում են գերմանական ճյուղի մեջ, իտալերենը, ֆրանսերենը, իսպաներենը, ռումիներենը, պորտուգալերենը՝ ռոմանական, պարսկերենը, քրդերենը, հինդին՝ հնդիրանական ճյուղերի մեջ և այլն:

Հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ է: Հայերենը միայնակ կազմում է հայկական խումբը (երկու լեզուներ ևս՝ հունարենը և ալբաներենը, ինքնուրույն ճյուղեր են կազմում):

Հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի տեղը որոշելու հարցում վճռական դեր է խաղացել Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր, գերմանացի հայագետ Հայնրիխ Հյուբշմանը: Այդ տեսակետը նա հիմնավորել է իր «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի դիրքի մասին» ծավալուն հոդվածի մեջ (1875 թ.): Մինչ այդ սխալ կարծիք կար, թե հայերենը իրանյան լեզու է (թյուրիմացության պատճառը հայերենի և պարսկերենի բառային մեծաթիվ ընդհանրություններն էի:

---

5. Ո՞ր լեզվաընտանիքին են պատկանում՝

ա) Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների լեզուները (ռուսներ, հույներ, եզդիներ, քրդեր, ասորիներ, ուկրաինացիներ, հնդիկներ)

բ) Հայաստանին հարևան երկրների լեզուները:

---

6. Դասավորի՛ր պարբերություններն ըստ տրամաբանական հաջորդականության:

1. Հայոց լեզվի մեջ հնդեվրոպական կամ բնիկ բառերը ամենահինն են, շուրջ 5000 տարեկան: Այդ բառերի մեջ շատ են բույսերի և պտուղների անուններ՝ *ծառ, բույս, խոտ, գարի, ծաղիկ, բարդի, եղևնի, բողկ, դեղձ, ծիրան, ընկույզ, մոշ, սունկ* և այլն, կենդանիների և թռչունների անուններ՝ *այծ, եզ, գառ, աքաղաղ, հավ, մաքի, աղվես, արջ, բորենի, լուսան, ոգնի, ծիծեռնակ, կռունկ, իժ, օձ* և այլն. բոլորը Հայկական լեռնաշխարհին են վերաբերում: Բնիկ հայերեն են նաև գյուղատնտեսությանը և կենցաղին վերաբերող *մածուն, թան, չիր, գինի, արուտ, արոր, արտ, գոմ, թակ* և բազմաթիվ այլ բառեր:

2. Հայոց լեզուն հայ ժողովրդի պատմության մշտական վկան է: Հայոց լեզուն վկայում է Հայկական լեռնաշխարհում վաղնջագույն ժամանակներից հայերի տարածված լինելու, ինչպես և նրանց հին ու նոր հարևանների մասին:

3. Դարերի ընթացքում հայոց լեզուն շատ փոխվեց, ձևափոխվեցին նաև մայր լեզվից ժառանգված բառերը: Որքան էլ փոփոխվեցին նրանք, միևնույն է, այսօր էլ իմացվում է, որ հնդեվրոպական են, մայր

լեզվից եկող: Այդ բառերը կոչվում են բնիկ հայկական: Ահա դրանցից մի քանիսը՝ *հայր, մայր, եղբայր, քույր, որդի, դուստր, թոռ, աչք, ականջ, լեզու, քար, ջուր, լույս* և այլն:

4. Երբ հայկական ցեղերը, լիովին անջատվելով հնդեվրոպական մայր ժողովրդից, ինքնուրույն կյանք էին վարում, հարաբերության մեջ մտան հարևան այլալեզու ցեղերի ու ժողովուրդների հետ, և լեզվական փոխազդեցություններ տեղի ունեցան: Լեզվական այդ շերտերը պահպանվել են հայերենում: Բայց, իհարկե, հայոց լեզվի առանցքը, հիմնական բառապաշարը և քերականությունը մայր լեզվից ժառանգվածն է:

Ըստ Ռ. Իշխանյանի *«Պատկերազարդ պատմություն հայոց» գրքի*

1) 2. 4. 3. 1
2) 1. 3. 2. 4
3) 2.4.1.3
4) 2. 3. 1. 4

Թեմա 2. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը

1. Կարդա՛ տեքստը և ստացած տեղեկությունները դասակարգիր աղյուսակի համապատասխան բաժնում (ընթերցելու համար անցեք հետևյալ հղումով՝ https://akunq.net/am/?p=27729, https://hy.wikipedia.org/wiki):

V - գիտեմ
- - իմ իմացածին հակասում է
+ - նոր տեղեկություն է
! - քննարկման կարիք ունի

V	-	+	!

2. Գրի՛ր էսսե՝ «Սերունդների գրական ժառանգությունը որպես մշակութային արժեք» թեմայով:

---

3. Համառոտ ներկայացրո՛ւ հայոց լեզվի զարգացման փուլերը՝ դրանց տարբերություններն ու ընդհանրացումները գրանցելով վենի տրամագրում: Ընթերցելու համար անցի՛ր հետևյալ հղումով՝ http://www.varjaran.am/book/10-i (Հ. լեզու 10, Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, Մակմիլան-Արմենիա, 2009, էջ 8):



4. Տրված գրաբարյան տեքստը կարդա՛ և փոխադրի՛ր արևելահայերենի:

Ճառ Վարդանայ

Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ զահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ ի փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտասցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան՝ վատութիւն մի՛ խառնեսցուք:

Եղիշէ, *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (Վարդանի և հայոց պատերազմի մասին)*

Թեմա 3 Մ. Մաշտոց և հայ գրերի գյուտը

1. **Դիտի՛ր Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբենը» նկարը և վերարտադրի՛ր բովանդակությունը գրավոր՝ օգտագործելով նաև թեմայից ստացած գիտելիքներդ:**

2. Նշիր ճիշտ տարբերակները.

Մաշտոցի ստեղծած հայկական այբուբենի հիմնական սկզբունքները հետևյալներն են.

ա) Մաշտոցն ընտրեց տառերի միասին գրություն, տառերը չեն գրվում հատիկ-հատիկ և առանձին:

բ) մեկ տառին մեկ հնչյուն, մեկ հնչյունին՝ մեկ տառ

գ) առաջընթաց հորիզոնական գրություն

դ) տառային և հնչյունային գիր

ե) տարորոշիչ նշանների բացակայություն

զ) հնչյունային գիր

է) Մաշտոցն ընտրեց տառերի անջատական գրություն, տառերը գրվում են հատիկ-հատիկ և առանձին:

3. Համառոտ ներկայացրո՛ւ՝ որո՞նք են հայոց լեզվի զարգացման գրային շրջանի փուլերը և ժամանակային ինչպիսի՞ ընդգրկում ունեն:

---

4. Համեմատի՛ր և գտի՛ր տարբերություններ գրաբարի և արևելահայերենի հնչյունական կազմերի միջև, նշի՛ր տարբերությունները:

5. Բնագիրը փոխադրի՛ր արևելահայերենի՝ օգտվելով տրված բառարանից:

«Առն, զոր ի նախակարգ բանիս[1] նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ[2], էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն[3] վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն[4] Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն» *(Կոր.,* էջ 36):

1. *Նախակարգ բանի* - նախաբան, խոսքի սկիզբ:

2. *Փոյք արարեալ մեր պատմելոյ* - մենք հոգ տարանք պատմելու, ջանացինք պատմել:

3. *Ի մանկութեան տիսն* - մանկության տարիներին, մանուկ հասակում:

4. *Եկեալ հասեալ (էր) ի դուռն*-եկել հասել էր դռանը, այն է՝ պալատը, արքունիքը:

---

6. Առանձնացրո՛ւ բնագրի առաջին երեք նախադասության մեջ գործածված ձայնավորները, որոշել, թե դրանցից որը քանի անգամ է կիրառված:

«Արք երկու էին ի քաղաքի միում, մին մեծատուն և միւսն աղքատ: Եւ մեծատանն էին հօտք և անդեայք բազում յոյժ, և աղքատին և ոչ ինչ, բայց որոջ մի փոքր, և որոջն հաստատեալ էր ընդ նմա և ընդ որդիս նորա ի միասին, ի հացէ նորա ուտէր և ի բաժակէ նորա ըմպէր և ծոց նորա ննջէր, և էր նորա իբրև զդուստր: Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն, և խնայեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց և յանդէոց իւրոց. և էառ զորոջ աղքատին և արար առնն եկելոյ կերակուր»:

---

7. Առանձնացրո՛ւ բնագրի առաջին նախադասության մեջ գործածված բաղաձայնները և բնորոշի դրանք:

«Զմեռն էանց[1], անձրևք անցին և գնացեալ մեկնեցան: Ծաղիկք երևեցան յերկրի մերում[2], ժամանակ էհաս յատանելոյ[3], ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում, թզենի արձակեաց զբողբոջ իւր, որթք մեր ծաղկեցան և ետուն[4] զհոտս իւրեանց: Արի՛, ե՛կ, մերձաւոր իմ. գեղեցիկ իմ. աղաւնի իմ … Երևեցոյ[5] ինձ զերեսս քո և լսելի արա ինձ զբարբառ քո, զի բարբառ քո քաղցր է և տեսիլ[6] քո գեղեցիկ *(Երգ երգոց, Բ,* 11-14):

1. *էանց* անցավ:
2. *Յերկրի մերում* - մեր երիթում:
3. *ժամանակ էհաս յատանելոյ* - հասավ՝ եկավ էտելու՝ էտի ժամանակը:
4. *Ետուն* - տվին:
5. *Երևեցո* - ցո՛ւյց տուր:
6. *Տեսիլ* - տեսք:

8. Տրված բնագրային հատվածը փոխադրի՛ր գրաբարի:

Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար թագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել:

9. Կարդա՛ և սովորի՛ր թեման, հղում՝ ttps://ostarmenia.com/hy/, **ներկայացրո՛ւ քո դիրքորոշումը:**

10. Ներքոբերյալ տեքստից օգտվելով՝ համեմատի՛ր և նշի՛ր գրաբարի և միջին հայերենի կառուցվածքային տարբերությունները:

Գրաբար	Միջին հայերեն

Միջին հայերենի կառուցվածքը

Գրաբարի համեմատությամբ՝ միջին հայերենի կառուցվածքն ունի հետևյալ առանձնահատկությունները: Հնչույթային համակարգում երկբարբառների մեծ մասը վերածվել է պարզ ձայնավորների, առաջացել են նոր հնչույթներ՝ *ղ* և *ֆ*, տեղի է ունեցել բաղաձայնների բաշխման տեղաշարժ: Ձևաբանության մեջ աստիճանաբար սկսել են գերակշռել կցականության և անջատականության տարրերը: Առաջացել են հոլովման նոր տիպեր (*ոջ, վան, ան, եան*), մեծ չափով ընդլայնվել են ի հոլովման կիրառման շրջանակները, հոլովիչ ձայնավորներն արդեն նախկին դերը չեն կատարել, և յուրաքանչյուր հոլով ստացել է իրեն հատուկ նոր ձայնավորում, սկսել է տարածվել ում վերջավորությամբ ներգոյականը: Հոգնակի թիվը կազմվել է նոր հոգնակիակերտներով (*եր, ներ, նի, վի, ստան, ապի, եան*), որոնք գրաբարում սահմանափակ կիրառություն ունեցող հավաքական մասնիկներ էին:

Խոնարհման համակարգում տեղի է ունեցել ներկա և ապառնի ժամանակաձևերի վերակազմավորում, ժխտականը կազմվել է անորոշ դերբայի և օժանդակ բայի ժխտականի ձևերով՝ չեմ ի գրել: Վերացել է բայի ստորադասական եղանակը, ավելի հստակ արտահայտություն է ստացել բայական սեռի կարգը՝ կրավորական *վ* ածանցի միջոցով, որոշ անկանոն բայեր ձեռք են բերել կանոնավոր խոնարհում:

Շարահյուսական կառուցվածքում նկատելի է որոշիչ – որոշյալի համաձայնության վերացումը, նախադաս որոշիչների գերակշռությունը, բայի տեղափոխությունը հիմնականում նախադասության վերջը, նայ, ու շաղկապների տարածումը և նոր շաղկապների առաջացումը, *առ, ընդ, ըստ, ց* նախդիրների փոխարեն *ի* նախդրի գործածությունը, զ նախդրի կիրառության սահմանափակումը միայն հայցական հոլովով:

Բառապաշարի մեջ զգալի տեղ են գրավել պարսկերենից, արաբերենից, թուրքերենից և եվրոպական լեզուներից կատարած նոր փոխառությունները: Խոսակցական լեզվից գրական լեզու են թափանցել նոր բառեր, ոճեր և արտահայտություններ:

11. Բնագիրը փոխադրի՛ր արևելահայերենի՝ պահպանելով հանգավորումը:

Միջին հայերեն	**Արևելահայերեն**
Ե՛ւ, ե՛կ դու ի քո տանէն, զինչ ելնե արեւն ի մօրէն,	

Ծագէ լոյս ի քո ծոցէդ, զինչ զարնան կայծակն ի յամպէն. Ծատ երէց ու աբեղայ իջուցեր քո սէրն ի բեմէն. Չիս այլ սիրու տէր արիր, ու հանիր իմ հօրն ի տանէն:	

ԲԱԺԻՆ 2. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

12. Համեմատի՛ր գրական հայերենի և գրաբարի հնչյունական համակարգերը և գտի՛ր ընդհանրությունները և և տարբերությունները:

13. Հայերենի ձայնավորները *համեմատի՛ր* այլ լեզուների ձայնավորների համակարգի հետ, *գտի՛ր* օրինաչափություններ և տարբերություններ:

_____

_____

_____

14. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը *է կամ ե*:

Առ__ռես, __ջանշան, միջօր__ական, ովև__, շարունակ__լի, երթև__կ, պատն__շ, գոմ__շ, **__ջմիածին,** վեր__լք, **առ__ռևույթ,** ելև__ջ, __ռակ, առ__ջ, **բազկ__ռակ**, __ական, __լակ, ամենա__ական, ամենա__ռկար, էլեկտրա__ներգիա, ստոր__կրյա, վեր__լակ, **հն__աբան**, **դող__ռոցք, ան__ռևակայելի,** Սևանհ__կ, Վարդգ__ս, բազմ__ռանգ, մանր__, ինչև__, որևից__, __տել, լայն__կրան, **բազ__,** հր__շ, ան__լանելի, մանր__ազերծ:

15. Կազմի՛ր նախադասություններ 14-րդ առաջադրանքի թավ գրված բառերով:

_____

_____

_____

16. Փակագծում տրված բառերում ավելացրո՛ւ բաց թողնված *է, ե* տառերը և տեղադրել տեքստի համապատասխան նախադասություններում:

Ջութակի _____ ունկնդիրներին կտրել էին _____ հոգսերից: _____ այդքան մարդ չէր հավաքվել, _____ այդպիսի համերգ երաժշտասերները _____ լսել: Այսպես փոքրիկ ջութակահարը մարդկանց կտրել էր _____ և _____ գործերից ու նետել կախարդական հնչյունների աշխարհ:

(երբև_, եվև_ջները, __ական, չ__ին, առօր_ական, երբևից_, ան_ական)

17. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը *օ, ո կամ վո:*

Առ__ոյա, փ__ղ, թռչն__ոս, շտապ__գնություն, ան__ոգանական, բար__ություն, բար__ակ, անդ__որություն, աման__ոյա, **ան__ինական,** ան__ոսալի, **ան__գուտ,** __ոբանոց, հայ__ոդի, __վքեր, **ան__ոեն**, __դանավ, սալոր__ղի, **քնքշ__ոեն,** __ոոնեժ, ան__գտակար, __տանա__ր**, դեղնագ__ծ,** __ոան, մի__ինակ, ամենա__ակյալ, **ջր__ոինեք**, զին__ր, __լգա, ամեն__ոյա, **ան__թևան**, մեղմ__ոոր, ջր__ոինեք, օր__ոոց, տափ__ղակ, հանր__գուտ, __լգա, **__ոմիզդուխտ**, __ղորկան**,** __ղական:

18. Համապատասխանեցրո՛ւ բառերն իրենց նշանակություններին:

Յուրօրինակ նախնական, սկզբնական օրինակ

անօրինակ միատեսակ, ձանձրալի

միօրինակ ուրիշներին չնմանվող,

բնօրինակ անսովոր, անհամեմատելի

19. Պատասխանի՛ր հարցերին և կազմի՛ր նախադասություններ:

1. Տարօրինակ (ի՞նչ, ո՞վ)
2. յուրօրինակ (ի՞նչ, ո՞վ)
3. անօրինակ (ի՞նչ)
4. միօրինակ (ի՞նչ)
5. (ինչի՞) բնօրինակ

20. 17-րդ առաջադրանքի թավ գրված բառերը գործածելով՝ գրի՛ր շարադրություն և վերնագրի՛ր բովանդակությանը համապատասխան:

---

21. Փակագծում տրված բառերում ավելացնո՛ւ բաց թողնված *օ, ո* տառերը և տեղադրեի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

Երկնքից _____ ժպտաց արեգակը, _____ _____ սար ու ձոր, արթնացրեց ծաղիկներին: Կակաչը բացեց _____ աչքերը, _____ նազեց մանուշակը….: Ձմռան _____ _____ ամիսներից հետո բոլորը, _____ միմյանց, ուրախ համերգով ասես օրհներգեցին արևին:

(քնքշ_րեն, սև_ռակ, մի_ռինակ, մեղմ_ռեն, ընդ_ռինակելով, ոսկեզ_ծեց, նրբ_ռեն, տրտմ_ռոր)

2. Լրացրո՛ւ խաչբառը՝ օգտագործելով *է*-ի և *օ*-ի ուղղագրության բառեր: Հղում՝ https://www.list.am/item/11106956 (Գ. ՄԿՐՏՉՅԱՆ, Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Հայոց լեզու, Վարժությունների և առաջադրանքների ժողովածու, Երևան, 2018, «Կռունկ գրատուն» 310 էջ)

Ուղղահայաց

1. Ամենօրյա բառի հոմանիշը: 2. Օր օրի վրա: 3. Կեսօր բառի հոմանիշը: 4. Ելնել և իջնել:

Հորիզոնական

1. Օր օրվա հետևից: 2. Աղջկա անուն: 3. Ինչ-որ ժամանակ: 4. Ծաղկի մաս: 5. Դաժան: 6. Անօրինական:



23. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը և այդ բառերով նախադասություններ կազմի՛ր:

Ամառային լուսնկա գիշեր էր: Հարավից փչում էր մեղմ___որ սյուքը: Լուսնի անրջային լույսով _ր ___ողողված Ձիրավի ընդարձակ դաշտավայրը, որ մեղմ___ռեն փռվել էր շղարշային կաթնամշուշի մեջ: Հազիվ էր նշմարվում հայոց սրբազան գետը՝ Արածանին: Թվում էր՝ անդորրություն է ամենուրեք, բայց դա սոսկ ___ռևութական էր: Հայոց զորքը բանակել __ր այդտեղ՝ Արածանիի ափին: Երկու շքեղ վրան առանձնանում __ին մյուսներից. մեկը Պապ թագավորի վրանն էր, մյուսը՝ Մուշեղի՝ հայոց սիգապանծ սպարապետի: Բոլորը քնած էին, և միայն կտրիճ պահապաններն էին հսկում բերդի ապահովությունը: Խավարչտին գիշերվա խորհրդավոր լռությունը խախտում էր միայն եղեգների մի___ռինակ խշշոցը:

24. Կարդա՛ և դո՛ւրս գրիր ձայնավոր հնչյունները:

Երազ իմ երկիր հայրենի,
Հոգսերդ՝ շատ, հույսդ՝ մեծ,
Քարքարոտ երկիր:
Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Երազ իմ երկիր հայրենի,
Հոգսերդ՝ շատ, հույսդ՝ մեծ,
Արծվաբույն երկիր:
Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քոնն են որդիքն իմ ջահել,
Հայրենի երկիր,
Հայաստան:

25. Քանի՞ հնչյուն և քանի՞ տառ կա բանաստեղծության ընդգծված յուրաքանչյուր բառում:

Բառ	Հնչյուն	Տառ
Երազ	**5**	**4**

26. Քանի՞ հնչյուն և քանի՞ տառ կա տեքստի ընդգծված յուրաքանչյուր բառում:

Մի անգամ Ս. Գրիգոր Լուսավորիչին մի տեսիլք *երևաց*. Աստծո *Միածին Որդին՝* Հիսուս Քրիստոսը, *երկնքից* իջավ ու *ոսկյա* մուրճով ցույց տվեց այն տեղը, ուր *տաճար* պետք է կառուցվեր: Դրա համար էլ նորակառույց տաճարը «Էջմիածին» կոչվեց (հին հայերեն՝ գրաբար՝ էջ Միածին «Միածինն իջավ» է նշանակում): Կարող ենք ասել, որ այդ դարից սկսած՝ *մինչև* այսօր Ս. Էջմիածինն ու նրա Մայր Տաճարն ամբողջ հայության ուխտատեղին են դարձել:

28. Լրացո՛ւ բաց թողնված տառերը: Տեքստից գտի՛ր և դո՛ւրս գրիր *է, ե-ի* ուղղագրությանը պատկանող բարդ և ածանցավոր բառերը և դրանցով նոր տեքստ կազմի՛ր:

Միջօրե էր, աներևակայելի շոգ: Վարդգեսը, որ երկար տարիներ չէր եղել հայրենի գյուղում, նորեկի անհագուրդ հետաքրքրությամբ զբոսնում էր հարազատ վայր...րում: Վեր...լքներով ու վայր...ջքներով ելև...ջող ճանապարհը ծանոթ էր նրան: Ահա երփն...րանգ դաշտերը, որտեղ արածում են գոմեշների

նախիրները, Սևանի...կը որ առատ էլեկտրա...ներգիա է մատակարարում շրջակա գյուղերին, լսվում է ծաղիկների առ...ջներից նեկտար հավաքող մեղուների բզզոցը: Ճանապարհից աջ՝ գետեզրին, հնէաբաններ են աշխատում, որոնք մանր...աբանի բծախնդրությամբ զննում են ինչ-որ պեղված բեկորներ: Առօրեական հոգսերով, կարևոր և ան...ական հարցերով տարված՝ տասը տարի չէր այցելել մանկության բնօրրանը և այժմ դողէրոցքով բռնվածի պես տենդագին դիտում էր շուրջբոլորը: Երբև... մտածե՞լ էր, թե այսքան ան...րկբայորեն կապված է հայրենի գյուղին, երբևիցե անդրադարձե՞լ էր, թե որքան ձգող է ծննդավայրը: Ինչևից..., կտրելով բազմերանգ ծաղիկներով պատված բլրակը, հասավ արգավանդ անդաստաններին:

---

29. Տրված բառերն ու նրանց իմաստները համապատասխանեցրո՛ւ գծերով:

Անէանալ	մանր օրգանիզմներ ուսումնասիրող մասնագետ
Դողէրոցք	վերևից ներքև տեղափոխվելու գործողություն
Հնէաբան	չքանալ, անհետանալ
Ելևէջ	հնություններով զբաղվող մասնագետ
Վայրէջք	տարուբերվելով շարժվելու գործողություն
Մանրէաբան	հիվանդություն, որի ժամանակ և՛ մրսում են, և՛ դողում:

30. Լրացնո՛ւ *ը* տառը այն բառերում, որտեղ անհրաժեշտ է, ընդգծված բառերով կազմի՛ ր շարադրանք:

Ակ__դետ, հյուր__նկալ, **անակ__նկալ**, վեր__թաց, մկ__նդեղ, դյուր__նկալ, առ__նչվել, երկ__նչել, խոչ__նդոտել, **ակ__նթարթ,** դաս__նթաց, մ__թնկա, ան__նթեռնելի, խոյ__նթաց, **չ__մբռնել,**

նախ__նտրել, սր__նթաց, **խաղ__նկեր**, __մպելիք, առ__նթեր, ակ__նդետ, դյուր__նթեռնելի, չ__նկնել, **ան__մբռնելի**, դր__մբոց, **օր__նդմեջ**, այլ__նտրանք, ճեպ__նթաց, ան__նդունակ, **ակ__նբախ,** __նթանալ, զուգ__նթաց, համ__նկնել, **չ__նդդիմանալ**, երկ__նտրանք, կոր__նթարդ, **առ__չվել**:

---

31. Փակագծում տրված բառերում ավելացրո՛ւ բաց թողնված *ը* տառը որտեղ անհրաժեշտ է և տեղադրի՛ր տեքստի համապատասխան նախադասություններում:

_____ տանտերը, որ իմ երբեմնի _____ էր, մեզ հյուրասիրեց _____ խորտիկներով, ապա առաջնորդեց մոտակա բարձունքը, որտեղից բացվում էր մի հրաշալի բնանկար: Լսվում էր գետակի _____ խոխոջյունը, օդում երևում էին _____ արծիվները: _____ զգացումով էր համակվել էությունս: Տերևների _____ սոսափը, _____ լսվող անտառային ձայները հիացրել էին մեզ:

(դաս_նկերն, ամենա_նտիր, խոյ_նթաց, ան_նդհատ, հյուր_նկալ, ան_մբռնելի, որոտ_նդոստ, մերթ_նդմերթ)

32. Առանձին սյունակներում տեղադրի՛ր բառամիջում *ը* ունեցող և չունեցող բառերը և բառերը գործածի՛ր գրավոր շարադրանքում:

Լուս__նկա, երկ__նտրանք, հատ__նտիր, հյուր__նկալ, ակ__նդետ, չ__նկալել, ակ__նթարթ, ինքն__ստինքյան:

Բառամիջում *ը* ունեցող բառեր	**Բառամիջում *ը* չունեցող բառեր**

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

33. Խմբավորել արմատի յ և ձայնակապ յ ունեցող բառերը:

Խնայողաբար, բարոյազուրկ, խոյահարել, ծառայողական, կայազոր, կայուն, կոյուղի, հայասեր, Հայաստան, հայելի, հայհոյել, հայեցողություն, հայորդի, հմայել, հմայիչ, արքայաբար, բայական, բայաձև, դերբայական, գարնանային, գոյական, դիմակայել, ենթակայություն, թեյաման, թեյարան, խոյակ, հեռակայել, հոյակապ, հոյաշեն, ճայակերպ, մակբայակերտ, մայիս, մնայուն, նայել, շոյել, սփյուռքահայություն, մատյան, մայել, նոյյան, բայական, գոյանալ, հայր, մայրենի:

Արմատի յ	Յ ձայնակապ

34. Տրված բաղադրիչներով կազմի՛ր բառեր՝ կիրառելով յ կիսաձայնի ուղղագրության կանոնները:

Սպա և կույտ ժողովածու և -ում, ընծա և գիր, ծառա և -ող, ծառա և -ություն, հասցե և տեր, հմա և -իչ, ձի և -(ա)վոր, մի և -ակ, մի և -անալ, մնա և -ուն, նախօրե և -ին, վերարկու և -(ա)վոր, ենթակա և -(ա)կան, Ուրարտու և -ում, աղա և -(ա)կան, առկա և -ություն, Արա և -իկ, արդի և -(ա)կան, արքա և որդի, բարո և -(ա)կան, բարո և զուրկ, բացակա և -ություն, սատանա և -(ա)կան, մեծ և միտ, տուբ և տես:

35.Փակագծում տրված բառերը տեղադրի՛ր համապատասխան նախադասություններում:

1. Եղբայրս շատ է սիրում _____ ճաշ:

2. Եկեղեցուց լսվող _____խաղաղությամբ էր լցնում տատիկիս հոգին:

3. Հորեղբայրս հաճախ է հիվանդանում _____:

4.Կենդանաբանական այգում առաջին անգամ տեսա _____:

5. _____ երկկենցաղ կենդանիներ են:

6. Ես այդ լուրը լսեցի _____:

7. Մանկության տարիներին ինձ համար մայրս _____ շատ է կարդացել:

8. _____ փոքր է _____:

9. Ես շատ եմ սիրում ձկան _____:

(*բամիա, ալելուիա,փասիան, իշիաս, միլիոն, միլիարդ, խավիար, ռադիո, կրիա, հեքիաթ*)

36. Դարձվածքներն համապատասխաներո՛ւ իրեն իմաստներին:

Կրիայի քայլերով -

Նոյի ագռավ -

Հեքիաթներ պատմել -

Ալելուիա կարդալ մեկի գլխին -

(ճիշտ չխոսել, երկար ու բարակ խրատներ կարդալ, հատուկ հանձնարարությամբ մի տեղ ուղարկված և չվերադարձած մարդ, ծայրաստիճան դանդաղ)

7. Պատմությունից հիշի՛ր անունները և տեղադրի՛ր համապատասխան նախադասություններում: Հղում՝ ttps://www.list.am/item/11106956 (Գ. ՄԿՐՏՉՅԱՆ, Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Հայոց լեզու, Վարժությունների և առաջադրանքների ժողովածու, Երևան, 2018, «Կռունկ գրատուն» 310 էջ):

ա/ Հայոց վերջին թագավորությունը _____ էր:

բ/ _____ աշխարհամաս է:

գ/ _____համարվում է ծագող արևի երկիր:

դ _____ նշանավոր է ցլամարտով:

ե/ _____ տաճարը վերանորոգել է Տրդատ ճարտարապետը:

զ/ _____ ջրվեժը անկրկնելի գեղեցկություն ունի:

է/ Լևոն Բ-ն _____ հայոց թագավորներից է:

38. Կազմի՛ր բառակապակցություններ *վայրկենաբար, զգուշորեն, բարյացակամ, լռելյայն* բառերով և դրանք գործածել շարադրության մեջ:

---

39. Տրված բառազույգերը տեղադրի՛ր համապատասխան նախադասություններում: Հղում՝ https://www.list.am/item/11106956 (Գ. ՄԿՐՏՉՅԱՆ, Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, Հայոց լեզու, Վարժությունների և առաջադրանքների ժողովածու, Երևան, 2018, «Կռունկ գրատուն» 310 էջ):

(հնչուն-հնչյուն ,կարկաչուն-կարկաչյուն, խոխոջուն-խոխոջյուն, շառաչուն- շառաչյուն, շաչուն-շաչյուն):

ա/ Անանիայի ձայնի դյութի _____ գերեցին ուսանողներին:

Մարիամի _____ ձայնը գերեց ունկնդիրներին:

բ/Գետակի _____ երաժշտության էր նման:_____ գետակի ձայնը երաժշտության էր նման:

գ/ Առվակի _____ լրացրեց բնության հրաշքը:

_____ առվակը լրացրեց բնության հրաշքը:

դ/ Գետի _____ սթափեցրեց նրան:

_____ գետը սթափեցրեց նրան:

ե/ Ջրվեժի _____ խլացրել էր բոլոր ձայները:

_____ ջրվեժը խլացրել էր բոլոր ձայները:

40. ***Կապույտ, կույր, բույր, համբույր, աշխույժ, զգույշ, թույլ, գույն, թույն, ընկույզ, զրույց, հյուր*** **բառերին ածանցներ ավելաննելով՝ կազմի՛ր նոր բառեր :**

_____

_____

_____

41. «10-րոպեանոց շարադրանք»-ի մեթոդը կիրառելով՝ նկարագրի՛ր ձեր առավոտյան թեյի սեղանը:

_____

_____

_____

42. ***Անգլիա, հեքիաթ, բամիա, օրիորդ, քիմիա, մաթեմատիկա, Ֆրանսիա*** **բառերին ավելացրո՛ւ -*****ային, -ական*** **ածանցները և գործածի՛ր նախադասություններում:**

43. Բաց թողնված տեղերում լրացրո՛ւ *յա, իա* կամ *եա և* դրանք գործածի՛ր շարադրության մեջ՝ «Հայրենի տան մոռացված անկյունում» վերնագրով:

Բար....ցակամ, սառուց....լ, առօր....կան, գործուն...., կր...., խավ....ր, առօր..., բամ...., կատար....լ, սար.....կ, ման.....կ, հեք....թասաց, որդ....կ, խարտ....շ, դաստ.....րակություն, Անան...., Սուք....ս, Անդր....ս, Եղ...., Եղ....զար, Երեմ...., քրիստոն....:

44. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում՝ *յա*, որում՝ *իա*: Բառաշարքից ընտրի՛ր բառեր և գործածի՛ր գրավոր շարադրանքում:

ա) բար....ցակամ, ման....կ, հնգամ...., կոզ....կ

բ) կր....ա, փաս....ն, օվկ....նոս, խավ....ր

գ) մատ....ն, դաստ....րակ, հեք....թասաց, բամ....

դ) առօր....կան, Երեմ…., կր…., մատ….ն

45. Երևակայական ճամփորդությո՛ւն կազմակերպիր Գերմանիայում կամ այլ տարածաշրջանում: Ծարադրանքիդ մեջ գործածի՛ր *խա* տառակապակցություն ունեցող բառեր:

---

46. Արտագրի՛ր և ընդգծի՛ր երկհնչյուններ ունեցող բառերը:

Սևանը թողել, հեռացել է այս ժայռերից: Վաղուց է հեռացել, և ժայռերը հիմա մի տեսակ օտար են թվում ջրերից ազատված ավազե հարթության վրա: ժայռերից մեկի ողորկ մակերեսին ուրարտական շրջանի սեպագրեր են. «Ռուսա Առաջին արքան չորս աշխարհ ծովի այս կողմից, տասնինը աշխարհ ծովի այն կողմից գրավեց ու միացրեց իր տերությանը և ի նշան դրա՝ կառուցեց Թեյշեբա աստծու այս տաճարը»: Տաճարը, հասկանալի է, չկա, իսկ սեպագրերը մաշվել են քամուց, ժամանակից, անձրևներից, ոչ շատ առաջ՝ նաև Սևանի ալիքներից: Տաճարը եղել է բարձունքի վրա՝ շրջապատված պարիսպներով, որոնց հետքերը դեռ մնում են: ժայռերի տակ ջրերից ազատված հարթությունն աստիճանաբար լցվում է նոր շինություններով: Կապույտ գույնի երկարուկ մի ավտոբուս մեկնվել է ավազներին և բավական խղճալի տեսք ունի, անիվները հանած են. նման է ձիու, որի չորս ոտքն էլ կտրված է: Նախկին ավտոբուսը հիմա շինարարների խորտկարանն է, և հավանորեն նրանցից մեկն էլ կարմիր յուղաներկով գրել է ավտոբուսի ճակատին. «Սրճարան Ուրարտու»: Ես նայում եմ Ռուսա Առաջինի սեպագրերին, հետո՝ ավտոբուսին և տխուր ժպտում ժամանակների այս կոկտեյլի վրա. Նույն քառակուսի կիլոմետրի վրա կայացել է տարբեր դարաշրջանների երկու պարծենկոտի հան-դիպումը. մեկը՝ արքա, մյուսը հավանորեն վարորդ, միայն թե, ափսո՛ս, որ ավտոբուսը երկար մեկնված չի մնա այս ավազներին, անիվներ կդնեն, կտանեն մի ուրիշ տեղ, որտեղ պետք լինի:

Ըստ Վարդգես Պետրոսյանի

47. Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով *յո, իո* կամ *եո:*

Միլ....ն, ամբ....ն, ամ....բա, ակորդ....ն, ավիաց....ն, արդ....ք, տրիլ....ն, աքս....մ, Բյուզանդ...ն, բրաբ....ն, սենսաց....ն, պանթ....ն, էքսկուրս....ն, թ....րեմ, ինդուկց....ն, լեգ....ն, կոալից....ն, մարմար....ն, միլ....նավոր, մուլտիպլիկաց....ն, շամպին....ն, չեմպ....ն, պանս....նատ, ռադ....ցանց, քամել....ն, օր....րդ:

48. Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով *յա, իա* կամ *եա*:

Անց....լ, հեթ....թ, պելու...., եղ....մ, Ամալ…, Անանա…, Արաքս...., Մար…, Բեն....մին, Բուն....թյան, դաստ....րակ. Եղ..., Երեմ...., Եղ...զարյան, էքսկուրս...., լ....ղդ, խավ....ր, Կիլիկ…, Մար....մ, Ազար…, միլ....ղդ, միմ....նց, մում…:
Սիս....ն, Սերբ..., վ...րկ....ն, փաս....ն, օվկ....նոս, Օֆել...Սոֆ…:

49. Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով *ու, ույ* կամ *յու*:

Ձգ....շ, ալ....ր, աշխ....ժ, զգ....շանալ, ընկ....զ, թ....ն, թ....նավորել, համբ....ր, համբ....ռել, հար....ր, հ....ր, հնչ....ն («գոյակ.), հնչ....ն (ածակ.), ձ....թ, ձ....ն, աղբ....ր, ողկ....զ, աղ....սակ, առ....ծ, ատամնաբ....ժ, արդ....նք, արծաթահնչուն, ար....ն, բ....լ, գ....ժ, գ....ժել, դաշ....ն, դաշ...նահարել, ս....նակ, երև....թ, ձ....լարան, մակաբ....ծ, մեղմահնչ....ն, մ....ս, մշակ....թ, մշակ....թային, ողջ....ն, ողջ....նել, պա....սակ, փ....թաջան, երև....թական:

50. Արտագրի՛ր՝ կետերի փոխարեն ըստ անհրաժեշտության գրելով *յ*:

Է....ական, է....ություն, թե....ել, թի....ակ, Իսրա....ել, մի....ակ, լի....ություն, խնա....ել, կակա....ռ, Ռաֆա....ել, ուխտադրու....ժ, կո....ալիցիա, հա....ելազարդ, հի....անալ, մի....այն, Սերգե...., ռա....ունդ, վա....ել, վա....ելել, տի....եզերք, Ուկրա....ինա,մի....անալ. մի….ասին, արխա....իկ, հա....ելի, բա....ոբաբ, գա....իսոն, է....ակ, կա....ուչուկ, Միքա....ել, Նա....իրի, նա....ել, պո....եմ, պո....ետ, ձի....արշավ, տրամվա...:

51. Որոշեք, թե որ բառերում է բաց թողնված երկհնչյուն, իսկ որ բառերում մեկ հնչյուն:

Դ....զն-ինչ, ատամնաբ....ժ, ուխտադր....ժ, Օֆել…, ան....շ, զգ....շ, ար....ն, արդ....ք, թռչ....ն, սր....նք, Ռաֆա....լ, դեղոր....ք, անագոր....ն, Ն....իրի, գա....սոն, դաշ....նահարել, բ....ժարան, երև....թական, Միքա....լ, հեբ....թ, մշակ...թային, փ....թաջանորեն . ալելու.., Եպրաքս...., Եղ...:

ԲԱՂԱՁԱՆՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

52. Համեմատի՛ր բաղաձանների տեսակներն միմյանց հետ, գտի՛ր օրինաչափություններն ու տարբերությունները՝ ներկայացնելով քո նախընտրած կամ ստեղծած գծակարգով:

Ձայնեղ բաղաձայններ	բ, գ, դ, ձ, ջ, վ, ղ, զ, ժ:
Ձայնորդ բաղաձայներ	լ, մ, ն, ր, ռ, յ:
Խուլ բաղաձայններ	պ, կ, տ, ծ, ճ, փ, ք, թ, ց, չ, ֆ, խ, ս, շ, հ.
Պարզ խուլեր	պ, կ, տ, ծ, ճ, ֆ, խ, ս, շ, հ:
Ծնչեղ խուլեր	փ, ք, թ, ց, չ

Տե՛ս և հիշի՛ր

Եռաշարք բաղաձայններ

Բ-պ-փ

գ-կ-ք

դ-տ-թ

ձ-ծ-ց,

ջ-ճ-չ

53. Բաց թողնված տեղերում համապատասխանաբար լրացրո՛ւ *բ, պ* կամ *փ* և ընդգծած բառերը գործածի՛ր «Զոհված մարտիկի հուշարձանի մոտ» վերնագրով շարադրության մեջ:

Հղ…..անալ, ար...ենալ, որ….ևայրի, Քերո…., թ….ռտալ, Գա….ղիել, հա….շտա…., որ…., նուր…., եր...ևիցե, ս….ղթնել, ս….ղղել, դար…., եղ...այր, խա….ել, խարխա….ել, դար….ին, շամ….ուր, եր…., ի….րև, Հակո…., համ….երել, ջրար….ի, համ….ույր, փր….ուր, հա….ճեպ, , շա….աթ, որ…., Սերո…., ա….շել, սուր…., սր….ել, աղ….անոց, ցայտաղ….յուր, եղ….այր, ող…., ար….ի:

54. Բաց թողնված մասերում համապատասխանաբար լրացրո՛ւ *գ, կ* կամ *ք:*

Որոշ բառեր գործածի՛ր գրավոր նկարագրական շարադրանքում:

Ա…...ապի, ան….ամ, ավա…., կողպե…., կար…., հա….նել, հան….ափոր, գո…., եր…., զու….ել, թա….ավոր, վարա….ել, վար……, թար….մանել, կարա…., հո….նել, հո….ի, հո….նակի, Օ….սեն, ձա…., ձի…., տարեր…., ճի…., արտասու…., փա….ցնել, ճրա…., մարա…., մար….արե, մար….արիտ, փեղ…., տրտմաշու…., փող…., նորո….ել, շո…., ո….ի, բազրի….,պատարա…., պար….և, սու…., թա….ցնել, ուրա…., օ….նել, վարուցան…., քսու…., օ….ուտ: